462

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«22» 01 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 004 - 24

Ձեռնարկողը՝ ***«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ***
ք. Երևան, Ն. Ադոնցի փողոց 21/3

Գործունեությունը՝ ***Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի հարակից տարածքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Արտաշատ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 004 - 24

« 22 » հունվարի 2024թ.

Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի հարակից տարածքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, Ծրագիր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Ն. Ադոնցի փողոց 21/3

Ներածական մաս. Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի հարակից տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Արտաշատ համայնքի սահմաններում: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող՝ արոտավայր: Արտաշատ քաղաքի բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 2.41կմ վրա, Շահումյան գյուղի բնակելի տարածքներից՝ 3կմ: Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհը գտնվում է հայցվող տարածքից 2.8կմ, Արտաշատի տրանսպորտային հանգույցը՝ 2.9կմ, Շահումյանի տրանսպորտային հանգույցը՝ 3.45կմ հեռավորությունների վրա:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի հանքավայրի 1-ին տեղամասի հարակից տարածքում նախատեսվում է իրականացնել ավազակոպճային խառնուրդի կուտակի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են մինչքեմբրի-ստորին պալեոզոյի մետամորֆային, պալեոզոյի նստվածքային, մեզոզոյի և պալեոգենի հրաբխածին-

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նստվածքային և նստվածքային, չորրորդականի նստվածքային, ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ-էլյուվիալ առաջացումները:
Տեղամասի բերվածքները ներկայացված են հրաբխածին-նստվածքային և մագմատիկ ապարների ու միներալների բեկորներով, որտեղ գերակշռում են բազալտային և անդեզիտաբազալտային կազմի ապարներ, դիորիտներ և գաբբրո:
Տեղամասի ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները գրեթե ամբողջովին մերկացած են, տեղամասի առանձին, մեկուսի հատվածներում զարգացած է 0.07-0.10մ հզորությամբ աղուտ-ալկալի հողանման զանգված: Դաշտային դիտարկումների արդյունքներով ավազակոպճային կուտակում կոպճի պարունակությունը կազմում է մոտ 40-42%, ավազինը՝ մոտ 58-60%:
Բերվածքները ներկայացված են հիմնականում գնդաձև և ոսպնյակաձև բավականաչափ հղկված հատիկների տեսքով, որոնք թույլ ցեմենտացված կավավազային խառնուրդով: Ըստ կատարված նախնական մակրոսկոպիկ դիտարկումների տվյալների՝ տեղամասի ավազակոպճային խառնուրդի ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, պետրոգրաֆիական (միներալոգիական) կազմերը համանման: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 3-ի հրահանգի աղյուսակ 1-ի՝ ավազի և ավազակոպճային ապարների ժամանակակից գետահունային, գետաողողատային և դարավանդային հանքակուտակները, որոնք բնութագրվում են տարեկան կամ բազմամյա ցիկլում տարածական տեղադիրքի, ձևի և չափերի փոփոխմամբ, վերագրվում են 1-2 խմբին: Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է պաշարների դասակարգում միայն C1 արդյունաբերական կարգով: Հաշվի առնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափսերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 4.5մ խորությամբ թվով 13 հետախուզահորերի միջոցով:
Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՈՍ 8736-2014 և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ԳՈՍ տեխնիկական պահանջների: Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է 2.0հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ 1:1000 մասշտաբով: Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ CAT 325 B մակնիշի էքսկավատորով V կարգի ամրության ապարներում:
Նախատեսվում է 13 հետախուզահորերի անցում, որոնց առավելագույն խորությունը նախատեսվում է 4.5մ, կտրվածքը՝ 1.5քմ, ընդհանուր ծավալը՝ 87.75խմ: Տեղամասի ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական ավազի և խճի արտադրության համար: Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 40x40սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով: Ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից, մեծ կտրվածքով մեծազանգված նմուշները ապահովում են կուտակի հատիկաչափական կազմի բարձր հավաստիության տվյալների ստացումը: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

փորվածքների պատից՝ ավազակոպճային կուտակի ամբողջ հզորությամբ: Կախված ավազակոպճային կուտակի հզորությունից, ակոսների երկարությունը կարող է տատանվել մինչև 4.5մ: Նմուշների մշակումը նախատեսվում է կատարել հետևյալ կերպ՝ նմուշարկման ակոսից վերցված ամբողջ նյութը լցվելու է բրեզենտե փռվածքի վրա, խառնվելու է և կրճատման եղանակով հասցվելու է 20-25կգ-ի, որն էլ կազմելու է շարքային նմուշի նյութը: Այն լցվելու է առանձին պարկերի մեջ, պիտակավորվելու է և ուղարկվելու է լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար: Նախատեսնվում է վերցնել 13 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 2 նմուշ քիմիական անալիզների և 2 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ СРП 68-02 սարքի միջոցով՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով.

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
1.	4421004.8120	8459187.0285
2.	4421028.0720	8459098.8710
3.	4421053.8550	8459054.8910
4.	4421088.5480	8459003.2620
5.	4421081.6984	8458993.8434
6.	4421030.0068	8459014.3556
7.	4420970.2336	8459043.6506
8.	4420943.1094	8459068.1009

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
9.	4420914.3146	8459125.6605
10.	4420920.9856	8459160.5627
11.	4420938.4572	8459203.8736
12.	4420952.9134	8459229.8487
13.	4420967.3696	8459255.8239
14.	4420981.5520	8459275.1860
1.	4421004.8120	8459187.0285

Տեղամասի բերվածքները ներկայացված են հրաբխածին-նստվածքային և մագմատիկ ապարների ու միներալների բեկորներով, որտեղ գերակշռում են բազալտային և անդեզիտաբազալտային կազմի ապարներ, դիորիտներ և գաբբրո: Տեղամասի ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները գրեթե ամբողջովին մերկացած են, տեղամասը զուրկ է հողաբուսական շերտից: Դաշտային դիտարկումների արդյունքներով ավազակոպճային

կուտակում կոպճի պարունակությունը կազմում է մոտ 42-43%, ավազինը՝ մոտ 57-58%: Հարակից տեղամասերի հետախուզման ու շահագործման տվյալների հիման վրա, տեղամասում բերվածքային առաջացումների առավելագույն հզորությունը սպասվում է 3.0մ-ի սահմաններում: Բերվածքները ներկայացված են հիմնականում գնդաձև և ոսպնյակաձև բավականաչափ հղկված հատիկների տեսքով, որոնք թույլ ցեմենտացված կավավազային խառնուրդով: Ըստ կատարված նախնական մակրոսկոպիկ դիտարկումների տվյալների՝ տեղամասի ավազակոպճային խառնուրդի ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, պետրոգրաֆիական (միներալոգիական) կազմերը համանման: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասում ծրագրավորվող աշխատանքերի ընթացքում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա հնարավոր է հետևյալ բացասական ազդեցությունների դրսևորումը: Տեղամասի տարածքում վնասակար գազերի և փոշու արտանետումները կապված են լինելու հիմնականում ավտոտրանսպորտի տեղաշարժի հետ: Հետախուզահորերի անցման ժամանակ փոշու արտանետումներ չեն լինելու, քանի որ ավազակոպճային կուտակը՝ ջրերի կապիլյար ներծծման հաշվին, գտնվում է ջրահագեցած վիճակում: Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի մոտակա բնակավայրերում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար չպիտի գերազանցեն 5մգ/խմ, 0.2մգ/խմ, 0.15մգ/խմ և 0.5մգ/խմ: Նախնական գնահատականներով, տեղամասի սահմաններում աշխատանքները սպասարկող VOLVO A40 մակնիշի բեռնատար մեքենայի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով առաջանալու է 0.0079գ/վրկ փոշի, ինչը չի գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Բուն հայցվող տարածքում բնական ջրային հոսքեր չկան: Հայցվող տարածքի հարավային, հարավ-արևելյան և հարավ-արևմտյան սահմանի և Արաքս գետի միջև առկա է 5-ից 150մ հեռավորություն: Քանի որ տեղամասը ծագումնաբանորեն կապված է Արաքս գետի ստորին դարավանդի լճային-ալյուվիալ նստվածքների հետ, ապա ավազակոպճային կուտակը մասամբ ջրակալված է, ինչը պայմանավորված է ջրերի կապիլյար ներծծմամբ: Հարակից տարածքները յուրաքանչյուր տարի վրածածկվում են գետի ջրերով և ձևավորվում են ավազակոպճային խառնուրդի դինամիկ պաշարները: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարվելու է գետի դինամիկ ռեժիմի դիտարկումներ և վարարման շրջանում՝ գետի ջրերի աղտոտումը կանխելու նպատակով, աշխատանքները դադարեցվելու են: Հյուսիսից տեղամասը սահմանափակվում է Արարատյան դաշտավայրի կոլեկտորա-դրենաժային համակարգի կառույցով՝ պաշտպանիչ հողաթմբով: Դրա վրա ազդեցություն աշխատանքների ընթացքում չի դրսևորվելու, քանի որ պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում, հորերը անցվելու են մեխանիկական շերտափման եղանակով և փաստագրման, նմուշարկման աշխատանքներից հետո կատարվելու է դրանց հետլցում: Տեխնիկական միջոցները տարածք են մտնելու գոյություն ունեցող ճանապարհներով: Հետախուզական աշխատանքները կատարվելու են թմբից նվազագույնը 5մ հեռավորության վրա: Տեղամասի տարածքի հիմնական մասը ներկայացված է ավազակոպճային խառնուրդով, համատարած հողաբուսական շերտ այստեղ չի ձևավորվել: Առանձին հատվածներում դիտարկվում է մոտ 3սմ հզորությամբ հողանման, աղակալված զանգված, որը միախառնված է ավազային

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

առաջացումների հետ, ինչը թույլ չի տալիս կատարել հողերի տարանջատված հեռացման աշխատանքներ: Այնուամենայնիվ, հետախուզահորերի անցման ժամանակ վերին հատվածը՝ 5սմ հզորությամբ, կուտակվելու է հորից հանված ավազակոպճային խառնուրդից առանձին: Ենթակառուցվածքներ՝ արտադրական հրապարակ, լցակույտ և այլ, չի նախատեսվում: Ավազակոպճային խառնուրդի հետախուզման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության տեխնոլոգիական գործընթացը բացառում է ագրեսիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ: Բուսականության վրա բացասական ազդեցություն գրեթե չի դրսևորվելու, քանի որ հանքավայրում չկա համատարած բուսածածկ, դիտարկված՝ մեկուսի թփերի տեսքով աճող բույսերը հանդիսանում են անապատային-կիսաանապատային աղասեր բուսականության բնորոշ տեսակ: Տեղամասի սահմաններում խոշոր կաթնասունների բներ, որջեր չեն արձանագրվել: Առկա են դաշտային մկների բազմաթիվ լքված բներ, թռչունների բնադրման վայրեր: Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ, կարճաժամկետ գործոնը կապված է լինելու աղմուկի հետ: Տեղամասում չեն արձանագրվել նաև ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է նվազագույն: Արտաշատի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում ընդերքօգտագործման թափոններ չեն ձևավորվում, քանի որ՝ հետախուզական փորվածքներից հանված ավազակոպճային նյութը, նմուշարկումից հետո, օգտագործվելու է ռեկուլտիվացիայի համար՝ հետ է լցվելու հորի տարածք, մեքենաների սպասարկումը կատարվելու է «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ արտադրական տարածքներում, որտեղ ապահովված են անհրաժեշտ պայմանները քսայուղերի, յուղերի, տարատեսակ նավթամթերքների անվտանգ պահման և օգտագործման համար: Աշխատանքների ընթացքում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 10կգ ոչ ավել), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից: Թափոնը հաշվառված է 91200400 01 00 4 ծածկագրով: Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ մոտակա պահպանվող տարածքը՝ «Խոր Վիրապ» պետական արգելավայրը գտնվում է տեղամասի կենտրոնից մոտ 6.3կմ հեռավորության վրա, նվազագույն հեռավորությունը մինչև տեղամասի հարավ-արևելյան ծայրակետը՝ 4.7կմ: Տեղամասի տարածքում չկան նաև բնության հուշարձաններ, Ամենամոտ «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանը գտնվում է հայցվող տարածքից մոտ 20կմ հեռավորության վրա: Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի և Արտաշատ համայնքի պատմության, մշակույթի հուշարձանների միջև հեռավորությունը կազմում է 3.1-6.8կմ: Բուն տեղամասի տարածքում պատմամշակութային հուշարձաններ չկան, տեղամասը չի համընկնում նաև հուշարձանների պահպանության գոտիներ հետ, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակության ժառանգության օբյեկտների վրա: Համաձայն ՍՆ-245-71 սանիտարական նորմերի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման տարածքների համար սանիտարական պահպանման գոտի սահմանված չէ: Առանց պայթեցման աշխատանքների կիրառման քարի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանվում է 50մ սանիտարական գոտի: Արտաշատ և Շահումյան համայնքի մոտակա բնակելի տարածքները գտնվում են 1-ին տեղամասից

համապատասխանաբար 2.3կմ և 2.6կմ հեռավորության վրա, ինչը գերազանցում է սանիտարական պահպանման գոտու չափերը 46 և 52 անգամ: Հետևաբար, ավազակոպճային խառնուրդի հետախուզման աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ այդ թվում՝

- վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ արտադրական տարածքում,
- նավթամթերքների պահեստավորում և պահում 1-ին տեղամասում չի կատարվելու,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- ըստ գործող նորմատիվների՝ 1մ2 տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից: Տեխնիկական ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերում և տեղափոխվելու է տեղամասի տարածք ընկերությանը պատկանող ավտոցիստեռնով: Ջրցանը կատարվելու է MZ-3607 (GAZ-52) ջրցան մեքենայով,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկում են հատուկ ծառայության ուժերով, իսկ արտաքնոցի հորը լցվում է քարերով,
- աշխատանքների դադարեցում Արաքս գետի վարարման շրջանում: Այդ ժամանակահատվածում կատարվելու են միայն գետի դինամիկայի դիտարկումներ,
- հետախուզահորերի տեղադրում տարածքի հյուսիսային սահմանին զուգահեռ անցնող պաշտպանիչ թմբից, դրենաժային առուներից և Արաքս գետից առնվազն 10-ական մետր հեռավորության վրա,
- կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում,
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,
- հետախուզահորերի անցման ժամանակ 5սմ հզորությամբ վերին շերտի քերում բահերով և տարանջատված կուտակում: Հետախուզական հորերի հետլցման աշխատանքներ (նախ՝ ավազակոպճային զանգված, այնուհետև՝ 5սմ հզորությամբ աղակալված հողանման զանգվածի վերին շերտը), ինչը թույլ կտա վերականգնել տեղամասի լանդշաֆտային ամբողջականությունը: Հետլցման աշխատանքներից հետո նախատեսվում է փխրեցնել տարածքը և ցանել շրջանին բնորոշ աղասեր բուսատեսակների սերմեր: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, առանց տեխնիկական միջոցների կիրառման: Աշխատանքների

կատարման նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կհատկացվի 179.5հազ.դրամ գումար.
- երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով: Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս,
- աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:
- «ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:
Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական տեղամասի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
- արաքս գետի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ պղտորության ուսումնասիրության նպատակով,
- կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում): Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն: Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 250.0հազ.դրամ:
Պատճառաբանական մաս. Արարատի մարզի Արտաշատ համայնքի վարչական շենքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն:
Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական

ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012թ.սեպտեմբերի 19-ի N15-Ն նորմերի պահանջներով:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան